ՏԱՂ.

ՎԱՍՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԱՅ ՆՈՒԻՐԱԿՆԵՐՈՒ ԳԼԽԱՏՄԱՆՆ։

Ինքն հարիւր հայոց թվական
Ծներ (յիսուն հինգ) թիւ աւելեան,
Յէջմիածնէն նուիրակք եկան,
Բոլոր աշխարհքս հոռոմոց տան։
Յոլով մեռոն կայ ընդ ինքեան.
Մեծ նամակով և օրհնութեամբ,
Եկեալ հասին բիւզանդիան,
Որ է Սամսպոլ՝ սրբոյ կոյսն։
Ով որ տեսաւ զնոսա լսման,
Իբր զհրեշտակ ընդունեցան.
Մեծն Յոհաննէս՝ սրբոյ նման,
Եպիսկոպոս աղնուական։
Վանք՝ և անապատք ուրախացան,
Յորժամ տեսին ըզկերեսան,
Օտէր Սարգիս եպիսկոպոսն,
Եւ զԴաւիթ կոյս աբեղայն։
Ընուանք նոցա համբաւեցան,
Սուրբ օրհնութիւնք որ կարդացան,
Եկեղեցիք բերկրեալք ցնծան,
Եւ ժողովուրդս որ օրհնեցան։
Նըւիրկեցին զքաղաքս լսման.
Եւ նաւեցին քաղաք Կաֆայն.
Կաֆայեցիք խիստ ցնծացան,
Իբր զառաքեալսն տէրունական։
Եղեալ գնացին Ղարսաղոման,
Սէջով քաղաք քրիստոնեայք կան.
Ամենն տեսին ուրախացան,
Մինչ ի պարսն և ոյթիկնայն։
Սէջովացիք զնոսա տեսան,
Խիստ պատուեցին և օրհնեցան.
Իլով քաղաքն յուղարկեցին,
Շատ քրիստոնեայք որ 'ի հոն կան։
Իլովացիքն երբոր տեսան,
Ամոց պատուեցին սրբոց նման,
Օրինչ սուրբ Գրիգոր պեսպարթևեան,
Լուսաւորչին Թոռանց նման։
Ցընծան նոքա 'ի ժողովն այն,
Շուրջառք և զգեստք խիստ պատուական,
Իլով քաղքէն առին ելան,
Դարձեալ եկին 'ի Աղքիրման։
Երբոր հասան 'ի Աղքիրման,
Խիստ խնդութեամբ բերկրեալ ցծան.
Ընտի նաւեալ եկան հասան,
Որ է Պօլիս Կոստանդիան։
Հիւրեր եկին մեզ առնման,
Օրինչ զհրեշտակք Աբրահամեան.
Ոնց Սամսպոլցիք զնոսա տեսան,
Տեառն Աստուծոյ շատ գոհացան։
Ընդ ժողովուրդք ժողովեցան,
Եւ ասացին ամենեքեան,
Թէ մի երթայք դուք միսրան՝
Կաթողիկոսն եղեալ վախճան։
Յայնժամ նստեալ և խորհեցան,
ԶԴաւիթ զբկին 'ի տեսութեան.
Ոնց որ հասաւ յԱմասիան,
Լուք մատնեցին զենքն 'ի յատեան։
Ընդ անօրէնք ժողովեցան,
Որպէսքն նեռ և կորբստեան,
Պիղծ Յուդայի եղեն նման,
Որ մատնեցին զՏէրն 'ի յատեան։
Յաստամբ եկեալ զԴաւիթ տարան,
Պարսն որդոյն դուռն 'ի տիվան[1],
Ասին չաշուտ[2] են միսրան,
Սոֆին[3] զբկել 'ի Գրանկիստան։
Եղին 'ի բանտ և 'ի զընտան[4],
Օրինքն մատնեցին 'ի ըսկէնճան[5],
Խեղճ մարմնին 'ի տաքացան,
Ի չարչարանքքն մաշեցան։

---

1) Դրեռն կամ դրռռռն։ — 2) Լրռեռ. — 3) Իմռռռն կամ՝ բինռռռն. — 4) Զընռռն կամ բանռռրքնել։ — 5) Տանջանք։

Անտի տուեալ 'ի զօրական,
Վ.խն 'ի զենձիլ[1] ձեռն 'ի կիլապան[2],
Զ.ասիթ բերին 'ի մեծ տիվան,
Տարին ձգեցին զափուճոցն[3] օտան[4]:
Լ.ուք զափուչիքն ամենեքեան,
Ի ձի հեծեալ վանքըն հասան.
Երբ նուիրակքն զնոսա տեսան,
Օ.ահի հարեալ զերդ զուռ դողան:
Եկեալ տարան զնոսա լման,
Ի մեծ վէզիրն[5] ալի փաշան,
Յայնժամ տեսեալ ըզերբորդեան,
Ասէ՝ բերէք վաղն 'ի տիվան:
Ելին զենքեանք վաղն 'ի տիւան,
Հաւսար նստան երեք փաշան[6],
Հարցաքննեին զամենեսեան,
Ուչ[7] մի զոնուն նոցա վերան:
Անտի եկեալ խոնտքար[8] մըտան,
Դա էր ասցեալ զիժար հրաման,
Ասաց ձգեցէ՛ք զափուճոցն օտան,
Մէկ քանի օր տան ըսկէնձան:
Դոքա եկեալ ամենեքեան,
Ի խոնտքարէն առեալ հրաման.
Լ.ուք կացուցին այլ մի տիվան,
Ը.մբռնեցին առեալ տարան:
Սուրբ Յովհաննու պէսքանատարան
Օ.ինչ Քրիստոսի օրն ըմբռման.
Ի շարչարանքըն զանազան,
Ա.ել աւուրս հնգետասան:
Օրն էր շաբաթ սուրբ կատարման,
Դահատակացն երրորդեան,
Գ.լխատեցին զամենեսեան,
Լ.այս կիրակի օր յարութեան:
Յովհաննու պէս գլխատեցան,
Կամ Յակոբու առաքելեան.

Որ է մարմինն ի սպանման,
Օ.աւուրս երրորդ անթաղ մընան:
Սրբոց մարմինքն որ հոն կեցան,
Ոչ յերեսնկրն թարշամեցան,
Լ.այսն էր ինչեալ աստղանման,
Օ.այն լոյս տեսեալ շատ մըսըրման[1],
Յետոյ գնացեալ Լ.մին խօճան[2],
Ա՞օտ մեծ վէզիրն Ալի փաշան,
Երբ զՅովսէփ արեմթեան,
Խնդրել զմարմինն տէրուհական:
Դա էր տուեալ ազէկ հրաման,
Գ.նա թաղէ զամենեսեան,
Օ.ամէն առէթն[3] ալէք լման,
Օ.ինչ ձեր օրէնքըն տայ հրաման:
Իսկ վարդապետք ժողովեցան,
Եպիսկոպոսք հաւաքեցան,
Եւ կրօնաւորք շատ միաբան,
Սրբոց թաղումն գումարեցան:
Երիցանիք խիստ զանազան,
Մեծ ու կրտսեր աշխարհական,
Ի հոն հասին ամենքեանեան,
Եւ սուրբ թաղմանն արժանացան:
Բամբ կանգնին կարգ կատարման
Եւ կատարեն զամէնն լման,
Պատեն զմարմինքն միաբան,
Եւ տահմանեն 'ի մի տապան:
Կանայք բազում ժողովեցան,
Լ.ալականներ ողբերգական,
Հ.ատ լացուցին զամենեսեան,
Մինչ տար ու ձոր 'ի լաց եղան:
Երեք մանկանց սրբոց նման,
Երեքն մի տապան եդան,
Արժանացան սուրբ հանդիստեան,
Դուք այլ կացէք ուրախութեամբ:
Բամբ զամենքդ միաբան,
Օ.ձեզ աղաչեմ զամենեսեան,

1) Շղթայ: — 2) Վ.ուրպան կամ գանգանոանք: — 3) Գանապան: — 4) Սենեակ:— 5) Նախարար կամ մեծ եպարքոս: — 6) Բաշա.— 7) Յանցանք:— 8) Իշխան ի վերայ քենոց և մանոս կամ աքոյ:

1) Հոքարոյի կամ Մահմատական: — 2) Մեր կամ սահմանակ: — 3) Սովորական:

Եւ Յովհաննէս անարժան,
Եմ քահանայ գործոյս ունայն։
Նըւիրկերուն օր կատարման,
Սակաւ բաներս որ գրեցան,
Ով որ ասէ զհայր Ծղայն,
Յիշեալ լեցի յարքայութեան։
Այս գործեցաւ 'ի մեծ թվական,
Ինքն հարիւր թիւն էր լըման,
Ծ·Ն· թիւ յաւելեան,
Հոկտեմբերի եօթնեւտասեան։

Զձեզ աղաչեմ զամենեսեան, ով ընթերցողք տեսարք սրբազան, Թաղսիրութիւն[1] չանէք· Երբոլիշն Աստուած օրհնէ զձեզ· անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր։

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Հ Ո Գ Ե Ւ Ո Ր Գ Պ Ր Ո Ց

ՀԱՌԻՃՈՅ ՎԱՆՈՒՑ

Ի ՇԻՐԱԿ

ԵԹԷ իրաւանչիւր մտածող եւ բարեմիտ Հային ցանկալի է իւր ազգի մանկտեաց ապագայ բարօրութիւնը, եԹէ նրանցից մի քանիսի եւ մանաւանդ մեր Հոգեւոր Դպրոցին իշխանութեան յատուկ փափագն է եղած այդ բարօրութեան իսկական տարրը մտցընելու համար ուսումնարաններ ունենալ, եւ եԹէ այդ գովելի իդեաներու եւ ցանկութեանց կարեւոր յաջողութիւնը օրինաւորելու համար շատ մեքերի արդիւնաւոր կարկառմանը զգայուել է կարօտութիւն, ուրեմն Հառիճոյ մենաստանը եւ անդ գտնուած Հոգեւոր դպրոցը մասամբ մի մեր ժողովրդի ծգտմանը եւ կարեաց արդիւնաւոր ծառայութիւն ցոյց տուած է։— Այս հռչակաւոր մենաստանի նախնի եւ արդեան վիճակներու մասին մանրապատում տեսութեամբ մի ընթերցասիրաց հետաքրքրական կարօտութիւնը բաւնալու պարտքը կը թողնում ժամանակի խնամոցը, այժմս անմեռնահաս լինելու պատճառաւ. միայն այսքանս ասելու անհրաժեշտ պարտք կը համարիմ, որ նոյն մենաստանի մահամերձ դրութեանը օժանդակելու ասպարէզ եւս սրանից քսան տարի յառաջ բանի մի Աղէքսանդրապոլցի երիտասարդաց խումբ, եւ ընկերական ճշմարիտ սիրով կապուած իւրեանց հանգանակեալ դրամական եւ այլ նիւթական զոհազործութիւններով շուրը եւ կենդանացուցիչ պատկերը վերադարձրին իրան։ Այսպէս բոլոր վտանգը վանքից հեռացնելուց յետոյ այդ անմնանուէր ընկերութիւնը ուսման ճաշակը առած լինելով, ահա համարեա երեքտասաներորդ տարի է որ հիմնած է այնտեղ ուսումնարան եւ հետեւաբար նրա հետ կից մի հոյակապ ննջարան աշակերտաց համար նրա մէջ արժանաւոր եկեղեցականք պատրաստելոյ նպատակաւ, իւրաքանչիւր տարի հոգալով ուսումնարանի բոլոր պիտոյքը։ Այս նպատակի ամենակարեւորութիւնը եւ մեր այժմեան դրութեան մեծ յարմարութիւն ունենալը յուսամ որ իւրաքանչիւր բարեմիտ Հայ խոստովանի։ Բայց ափսոս որ փոքրահոգ ընկերութեան բարենպատակ ծգտմանց եւ ձեռնարկութեանց օժանդակութիւն ցոյց տալոյն անտեղի հրաժեշտներ կը վայելէր մեր նորակառոյց հոգեւոր Դպրոցը ոչ միայն ուսման ճաշակն չառնող մի հասարակութեան կողմից, այլ եւ հոգեւոր իշխանութեան եւ նոյն վանքում գրտնուած քանի մի անբարեմիտ պաշտօնեաների կողմից շինել եւ քանդել, կարգադրել եւ խանգարել, խրախուսել եւ հալածել, ողորմելի աշակերտաց. այս էր ահա մի ժամանակեայ ընկերութեան եւ վանահօր փոխադարձական սխրագործութեան ցաւալի պատկերը. թողում ասել եւ այլ այն յարգելի խոչնդոտներն, որոնք անակնուելի խոչնդոտներու հետ ի միասին թեւ թեւի տուած բարեպաշտոն ընկերութեան առաջն էին դալիս իւրաքանչիւր օր եւ իւրաքանչիւր տարի. որով նոցա ամենայն մէկ բարի եւ արդիւնաւոր գործառնութիւնը առ ժամանակեայ դադարումն եւ սառնութիւն կը ստանար։ Այս ամէն խոչնդոտներուն եւ անտեղի վշտաց դէմ հսկայաբար կը դիմանար Հառիճոյ ընկերութիւնը եւ միշտ կը յուսար որ երբ եւ իցէ իւր Դպրոցի բաղձն էլ կը փայլի ողորմութեամբն Աստուծոյ. անհետացան այն ցաւալի միջոցները ժամանակի անյատակ եւ անդառնալի հեղեղների մէջ. եւ ընկերութեան նորաբողբոջ ուսումնարանը շնորհիւ իւր բարեպաշտոն հիմնադրաց տոկալով այն ամէն մրրիկների ուժին, կարողացաւ մի քանի արժանաւոր պտուղներ շնորհել իւր սաներուց. սրանցից մի քանին կը շարունակեն գեղերի մէջ արժանաւոր սրբազնագործութեան պաշտօնն լրացնելով ըստ ամենայնի

---

1) Պ-ֆ-----Ն։